

Գ-711-02.02.2015-SՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահապանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-270 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) առաջին պարբերությունում «հաշվարկ-հաշվետվությունները» բառերից հետո լրացնել «թղթային տարբերակով» բառերը,

2) երկրորդ պարբերությունում «հաշվարկ-հաշվետվությունների» բառերից հետո լրացնել «թղթային տարբերակի» բառերը,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Վճարողների կողմից վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները համապատասխան լիազոր և հարկային մարմիններ կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Հաշվարկ-հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 11.1-ին հոդվածի 3-րդ մասում՝

1) առաջին նախադասությունում «հաշվարկ-հաշվետվությունները» բառերից հետո լրացնել «թղթային տարբերակով» բառերը,

2) երկրորդ նախադասությունում «հաշվարկ-հաշվետվությունների» բառերից հետո լրացնել «թղթային տարբերակի» բառերը,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ճշտված հաշվարկ-հաշվետվությունները համապատասխան լիազոր և հարկային մարմիններ կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 13.7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ռոյալթիների հաշվարկ-հաշվետվությունները» բառերից հետո լրացնել «բացառապես էլեկտրոնային եղանակով» բառերը,

2) 3-րդ մասում «պատճենները» և «տեղեկությունները» բառերից հետո լրացնել «բացառապես էլեկտրոնային եղանակով» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթացմամբ քննարկման ժամանակահատվածում ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
ՀՀ կառավարություն	Նախագծով նախատեսվել էր, որ վճարողների կողմից վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները համապատասխան լիազոր մարմին գրանցման և հարկային մարմին կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ թղթային եղանակով ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետներում՝ եռամսյակին հաջորդող 15 օրվա ընթացքում լիազոր մարմին գրացման, իսկ դրան հաջորդող 5 օրվա ընթացքում՝ հարկային մարմին: Նկատի ունենալով հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորությունները, առաջարկվում է սահմանել այդ եղանակով ներկայացման համար մեկ միասնական վերջնաժամկետ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, իսկ ներկայացման կարգը կսահմանվի ՀՀ կառավարության կողմից: Նույն մոտեցումն առաջարկվում է կիրառել ճշտված հաշվարկ-հաշվետվությունների դեպքում:	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է, որ վճարողների կողմից վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները համապատասխան լիազոր և հարկային մարմիններ կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է, որ ճշտված հաշվարկ-հաշվետվությունները համապատասխան լիազոր և հարկային մարմիններ կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով:
ՀՀ կառավարություն	Նախագծով նախատեսվել էր, որ օրենքն ուժի մեջ է մտնելու 2016թ. հունվարի 1-ից: Հաշվի առնելով հաշվարկ-հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգի ներդրման համար պահանջվող ժամանակը, առաջարկվում է սահմանել, որ օրենքն ուժի մեջ է մտնելու 2017թ. հունվարի 1-ից:	Նախագծի 4-րդ հոդվածում «2016 թվականի հունվարի 1-ից» բառերը փոխարինվել են «2017 թվականի հունվարի 1-ից» բառերով: